



Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յիսուս եւ
Լազարոս



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2013 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Մարիամ եւ Մարթա շատ մտահոգ
էին: Իրենց եղբայրը Լազարոս
շատ հիւանդ էր: Քոյրերը
գիտէին, թէ Լազարոս
շուտով կրնայ մեռնիլ:
Յիսուսի ետեւէն
դրկեցին: Ան շատ կը
սիրէր այս պզտիկ
ընտանիքը
Պեթանիէն:




Երբ Յիսուս լսեց Լազարոսի մասին Ան Իր
աշակերտին ըսաւ. "Այս հիւանդութիւնը մահով չի
վերջանար": Թեւ Յիսուս հեռու էր, Ան ճշգրիտ
գիտեր, որ ինչ պիտի պատահի Լազարոսի:



Յիսուս երկու օր սպասեց Պեթանի մեկնելէ առաջ:
Ետքը Ան բան մը ըսաւ, որ մեծ զարմանք եւ շփոթ
պատճառեց իր աշակերտներուն:



"Լազարոսը մեռաւ: Լաւ որ հոն չէի, որպէսզի դուք
հաւատաք": Ի՞նչ կը նշանակէին այս տարօրինակ
բառերը: Ի՞նչ կը պատրաստէր Յիսուս ընել:



Երբ Յիսուս
Պեթանի հասաւ,
Լազարոս չորս օրէ
արդէն մեռած էր: Իր
մարմինը դամբարանի
կտորներով
փաթթուած,

քարայրէ
գերեզմանի
մէջ էր:



Մարթա գնաց, որպեսզի Յիսուսը դիմաւորէ: "Քու
եղբայրդ ետ պիտի ելլէ", ըսաւ Յիսուս: "Ես գիտեմ,
համբարնաւ վերջին օրը":



Մարթա պատասխանեց: Ան կը կարծեր, որ պէտք է սպասէ մինչեւ ժամանակի վերջը, որպէսզի նորէն Լազարոսը տեսնէ:



Բայց Յիսուս բան մը կ'ըսէր:






"Ես եմ հարստութիւնը
եւ կեանքը", ըսաւ
Յիսուս մարդոց: "Ան
որ կը հաւատայ Ինծի,
պիտի ապրի նոյնիսկ
եթէ մեռնի": Մարթա կը
հաւատար Յիսուսի: Ան
գիտեր, թէ Ինք
է Աստուծոյ
Որդին: Բայց
ինչպէ՞ս
կրնար օգնել
Լազարոսին:



Ամեն մարդ տխուր էր Լազարոսի մահով: Իր քոյրը
Մարթա կու լար: Նոյնպես իր բարեկամուհիները,
որոնք կը փորձէին զինք հանգստացնել: Յիսուս
ինք ալ կու լար:




Յիսուս ժողովուրդին
հետ գերեզման գնաց:
Մեծ ժայռ մը կը գոցեր
դրանցքը:



"Ժայռը հեռացուցեք",
հրամայեց Յիսուս:
"Տե՛ր" պատասխանեց
Մարթան, մինչեւ հիմա
ժահ կ'ըլլայ,
որովհետեւ
չորս օրէ
արդէն
մեռած
է:




Յիսուսի
հրամանով մարդիկը
հեռացուցին ժայռը:
Ետքը Յիսուս աղօթեց
իր երկնաւոր հօր,
Յիսուս հրաշք պիտի
գործէր այնքան մեծ
հրաշք, որ ժողովուրդը
պիտի գիտնար, թէ
Աստուած դրկած
է զինք:




"Լազարո՛ս",
Յիսուս պոռաց.-
"Դո՛ւրս եկուր":
Ժողովուրդը
ապշած կը նայեր
քարայրին:
Կրնար Յիսուս
մեռած մարդ մը
վերապրեցնել:





Այո՛:
Լազարոս
քարայրէն
դուրս
եկաւ, ...





...
ամբողջովին
դամբարանի
լաթերով
ծածկուած
- ողջ:



"Քակեցէք իրեն",
ըսաւ Յիսուս,
"Զգեցէք որ
երթայ":



Ինչ ուրախութիւն կար իոն: Արցունքներ
դարձան խնդուքի: Յիսուս յարգեց
իր խօսքը, Լազարոս նորէն ողջ
էր: Միայն Աստուծոյ որդին
կրնար կեանք տալ մեռած
մարդու մը:



Շատ մը մարդիկ տեսան այս հրաշքը եւ
հաւատացին Յիսուսի: Բայց ուրիշներ զինք
մատնեցին իր թշնամիներուն,
տաճարի առաջնորդներուն:

Նախաձեռնութեամբ
լեցուն անոնք
որոշեցին սպաննել
Յիսուսը: Երբ
Յիսուս գիտցաւ
Ան ժամանակ
մը հեռացաւ:



Յիսուս եւ Լազարոս

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Յովհաննու 11

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մաթնոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

